ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 185-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի N 659-Լ ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածը, ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով ու 3-րդ մասով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 666-Լ որոշման N 1 հավելվածի 31-րդ և 32-րդ կետերով՝

1. Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 699-Լ և N 727-Լ որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 659-Լ որոշման հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները.

1) 9-րդ կետում՝

ա. 11-րդ ենթակետում «տրանսպորտի բնագավառում» բառերը փոխարինել «տրանսպորտի և ավտոմոբիլային ճանապարհների ոլորտներում» բառերով, իսկ

«նախարարության ոլորտում վերջինիս կողմից» բառերը՝ «նախարարության կողմից այդ ոլորտներում» բառերով,

բ. 12-րդ ենթակետում «ճանապարհային,» բառից հետո լրացնել «ինչպես նաև» բառերով, իսկ «ոլորտի» բառը փոխարինել «ոլորտների» բառով,

գ. 13-րդ ենթակետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

դ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 14-րդ ենթակետով՝

«14) ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության կառավարումը:».

2) 10-րդ կետում՝

ա. 31-րդ ենթակետում «տրանսպորտի բնագավառում» բառերը փոխարինել «տրանսպորտի և ավտոմոբիլային ճանապարհների ոլորտներում» բառերով,

բ. 32-րդ ենթակետից հանել «, ինչպես նաև ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների պահպանման և անվտանգ երթևեկության» բառերը,

գ. 34-րդ ենթակետում «տրանսպորտի բնագավառում» բառերը փոխարինել «տրանսպորտի և ավտոմոբիլային ճանապարհների ոլորտներում» բառերով,

դ. 34-րդ ենթակետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

ե. լրացնել հետևյալ բովանդակությամբ 36-րդ ենթակետով՝

«36) ավտոմոբիլային ճանապարհների ոլորտում Հայաստանի Հանրապետության կառավարության քաղաքականության մշակումը, ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների շինարարության, պահպանման և ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության կառավարման ապահովումը:».

3) 11-րդ կետում՝

ա. 88-րդ ենթակետում «տրանսպորտի և ճանապարհաշինական ոլորտի» բառերը փոխարինել «տրանսպորտի և ավտոմոբիլային ճանապարհների ոլորտների» բառերով, իսկ 89-րդ ենթակետում «տրանսպորտի և ճանապարհաշինական ոլորտին» բառերը՝ «տրանսպորտի և ավտոմոբիլային ճանապարհների ոլորտներին» բառերով,

բ. 90-րդ և 91-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«90) տրանսպորտի, ինչպես նաև ավտոմոբիլային ճանապարհների ոլորտներին վերաբերող նորմատիվ իրավական ակտերի մշակում և ընդունում.

91) միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիների հողերում (բացառությամբ բնակավայրերի հողերի օգտագործման, ինչպես նաև կառուցապատման համար նախատեսված այլ հողերի քաղաքաշինական սահմանափակումների և նորմերի) կառուցվող օբյեկտների ցանկի, նկարագրի, առանձնահատկությունների և դրանց ներկայացվող պահանջների մշակում.»,

գ. 93-րդ և 94-րդ ենթակետերում «ճանապարհաշինական» բառը փոխարինել «ավտոմոբիլային ճանապարհների» բառերով,

դ. 95-րդ ենթակետում «շինարարության, նորոգման (հիմնանորոգում, միջին նորոգում), շահագործման (ընթացիկ նորոգում, պահպանություն) ծրագրերի մշակում և դրանց մոնիթորինգ» բառերը փոխարինել «շինարարության, նորոգման ու պահպանման ծրագրերի մշակում և իրականացում» բառերով,

ե. 96-րդ ենթակետում «կառուցման» բառը փոխարինել «շինարարության» բառով,

զ. 119-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«119) ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության ապահովման նպատակով ճանապարհատրանսպորտային պատահարների առաջացման պատճառների վերաբերյալ տվյալների ուսումնասիրությունների ու վերլուծությունների և ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության բարելավման միջոցառումների իրականացում.»,

է. 123-րդ ենթակետում «ու դրանց ինժեներական կառույցների պահպանման և շահագործման աշխատանքների նկատմամբ հսկողության իրականացումը» բառերը փոխարինել «, ինժեներական կառույցների ու երթևեկության կազմակերպման կահավորանքի տեղադրման, միջին նորոգման (նորոգման) ու պահպանման աշխատանքներ իրականացնող կապալառու կազմակերպությունների պայմանագրերի կատարման նկատմամբ հսկողության իրականացումը» բառերով,

ը. 132-րդ ենթակետում «տրանսպորտի ոլորտում» բառերը փոխարինել «տրանսպորտի և ճանապարհային ոլորտներում» բառերով,

թ. 150-րդ ենթակետի «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով,

ժ. լրացնել հետևյալ բովանդակությամբ 151-181-րդ ենթակետերով՝

«151) իր տնօրինության տակ գտնվող ավտոմոբիլային ճանապարհների պաշտպանական գոտիներում և բնակավայրերի սահմանների միջով անցնող տարանցիկ հատվածներում շենքերի և շինությունների կառուցման, վերակառուցման, ինժեներաերկրաբանական, ինժեներագեոդեզիական հետազննություններ, արդյունահանման աշխատանքներ իրականացնելու, անտառահատում կատարելու, հողածածկույթը վնասելու, պաշտպանական գոտիների հողերում հիդրոլոգիական ռեժիմի փոփոխություններ կամ ռելիեֆի տարրերի կայունություն (սողանքներ, լանջերի փլվածքներ, ձորակներ, լճակներ կամ հողերի ճահճացում) ապահովող աշխատանքներ իրականացնելու, ճանապարհային երթևեկությանը չվերաբերող նշաններ, ցուցանակներ, լուսավորություն տեղադրելու, ծառատունկ իրականացնելու, ճանապարհին միացնող ուղիներ, իջատեղեր, մուտքեր և ելքեր կառուցելու համաձայնությունների տրամադրում.

152) իր տնօրինության տակ գտնվող ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում ճանապարհի երկարությամբ հաղորդակցուղիների տեղադրման համաձայնությունների տրամադրում.

153) իր տնօրինության տակ գտնվող ավտոմոբիլային ճանապարհի օտարման շերտում և պաշտպանական գոտում սպասարկման օբյեկտների տեղադրման թույլտվությունների տրամադրում.

154) իր իրավասության սահմաններում ճանապարհային ենթակառուցվածքի և ճանապարհային անվտանգության ոլորտները կարգավորող նորմատիվ իրավական ակտերի մշակում, ինչպես նաև իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում դրանց ընդունում.

155) իր տնօրինության տակ գտնվող ավտոմոբիլային ճանապարհների ակտիվների կառավարման, ճանապարհների տեխնիկական վիճակի գնահատման, տվյալների հավաքման և վերլուծության իրականացում.

156) ճանապարհային անվտանգության աուդիտի անցկացման ապահովման և աուդիտորների որակավորման իրականացում.

157) ճանապարհային անվտանգության ստանդարտներին, շինարարական նորմերին, տեխնիկական կանոնակարգերին և ճանապարհային անվտանգության ոլորտում Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին համապատասխան ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության կառավարում.

158) ճանապարհային երթևեկության մասնակիցների խոցելի խմբի ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության բնագավառում ի հայտ եկած կարիքների ուսումնասիրում և վերլուծում, ինչպես նաև ճանապարհային անվտանգության բարձրացման նպատակով երթևեկության տարբեր մասնակիցների խմբերի վարքագծի բարելավման ուղղությամբ այլ իրավասու մարմինների հետ համատեղ կրթական և իրազեկման արշավների մշակում և իրականացում.

159) ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատման իրականացում.

160) իր տնօրինության տակ գտնվող ավտոմոբիլային ճանապարհների ճանապարհային անվտանգության նպատակային և պարբերական հետազոտությունների ու զննության իրականացում և ճանապարհային ցանցի անվտանգության բարելավմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարություն առաջարկությունների ներկայացում.

161) ճանապարհային ենթակառուցվածքի անվտանգության ապահովման նպատակով ճանապարհային անվտանգության ռիսկերի վրա հիմնված առաջնահերթ գործողությունների տարեկան ծրագրի կազմում և իր իրավասության սահմաններում ռիսկերի կրճատման միջոցառումների իրականացում.

162) թունելների անվտանգության գնահատման, մշտադիտարկման և այդ պահանջների պահպանման նկատմամբ հսկողության իրականացում, թունելների

անվտանգության ապահովման նպատակով վթարների արագ արձագանքման միջոցառումների ծրագրի մշակում.

163) թունելների անվտանգության նվազագույն պահանջների սահմանում և թունելների անվտանգության պարբերական փորձարկման և գնության իրականացման ապահովում.

164) ճանապարհատրանսպորտային պատահարների ցուցանիշների հավաքման, դրանց հետևանքով տուժած (մահացած և տարբեր աստիճանի վնասվածքներ ստացած) անձանց վերաբերյալ տվյալները հաշվառող, ինչպես նաև դրանց հաշվառման վիճակագրական տվյալների վերլուծությունն իրականացնող պետական շահագրգիռ մարմինների տրամադրած տեղեկատվության հիման վրա ճանապարհատրանսպորտային պատահարների հետևանքով կրած վնասների միջին հանրային ծախսերի հաշվարկի և վերլուծության իրականացում.

165) իր տնօրինության տակ գտնվող ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների զարգացմանն ուղղված ծրագրերի և դրանց ֆինանսավորման առաջնահերթությունների կարգի մշակում և հաստատում.

166) պետություն-մասնավոր գործընկերության շրջանակներում ճանապարհաշինության ոլորտում ներդրումային ծրագրերի իրականացում՝ «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան.

167) թունելի վթարային իրավիճակի դեպքում դրա շահագործումն անհապաղ կասեցնելու, սահմանափակելու կամ դադարեցնելու կարգի սահմանում.

168) իր տնօրինության տակ գտնվող ավտոմոբիլային ճանապարհների երթևեկության անվտանգության և շահագործման պայմանների ապահովման նպատակով ճանապարհների կառուցման, վերակառուցման կամ շահագործման թույլտվության տրամադրում.

169) ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների կառուցման, վերակառուցման կամ շահագործման թույլտվության տրամադրման փաստաթղթերի ցանկի, ինչպես նաև թույլտվություն տալու կարգի մշակում.

170) ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների երթևեկության կազմակերպման կահավորանքին՝ ճանապարհային լուսացույցներին ներկայացվող պահանջների, դրանց կիրառման ու տեղակայման կանոնների և ճանապարհային նշաններին ներկայացվող պահանջների, դրանց կիրառման և տեղակայման կանոնների մշակում.

171) պատվարների և ամբարտակների վրայով անցնող ճանապարհահատվածներից օգտվելու կարգի մշակում.

172) ճանապարհային հեռանկարային շինարարության համար պայմաններ ստեղծելու նպատակով նորմաներից պակաս հեռավորության վրա բնակավայրերի, շենքերի և կառուցվածքների նախագծման, շինարարության և շահագործման կարգի մշակում.

173) ճանապարհային հեռանկարային շինարարության համար պայմաններ ստեղծելու նպատակով նորմաներից պակաս հեռավորության վրա բնակավայրերի, շենքերի և կառուցվածքների նախագծման, շինարարության և շահագործման համաձայնության տրամադրում.

174) չմասնատվող բեռներ փոխադրող թույլատրելի առավելագույն զանգվածը գերազանցող կամ մեկ սռնու վրա ընկնող բեռնվածքը գերազանցող կամ մեծ եզրաչափերով տրանսպորտային միջոցներով փոխադրումների իրականացման երթուղու տրամադրման թույլտվության կարգի, տրանսպորտային միջոցների թույլատրելի առավելագույն զանգվածի կամ մեկ սռնու վրա ընկնող բեռնվածքի, ինչպես նաև մեծ եզրաչափերի առավելագույն զանգվածների և չափերի մշակում.

175) ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհները ոռոգման առուներով, էլեկտրոնային հաղորդակցության և էլեկտրականության գծերով, խողովակաշարերով և այլ հաղորդակցուղիներով, ավտոմոբիլային ճանապարհներով և երկաթուղագծերով հատման, ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում կամ պաշտպանական գոտում ավտոմոբիլային ճանապարհների տնօրինողների հետ դրանց տեղադրման և վերատեղադրման համաձայնեցման կարգի, նոր կառուցվող և վերակառուցվող ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտում հեռահաղոր-

դակցության ենթակառուցվածքների անցկացման համար նախատեսված դիտահորերի, խրամուղիների, հենասյուների կառուցման, ինչպես նաև դրանք հեռահաղորդակցության օպերատորներին վարձակալությամբ տրամադրման կարգի և պահանջների մշակում.

176) ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ ամառային և ընթացիկ ձմեռային պահպանման աշխատանքների իրականացման, վիճակի գնահատման, ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող կամուրջների և թունելների պահպանման աշխատանքների իրականացման կարգի, ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների և դրանց վրա գտնվող՝ առանձին պահպանման հանձնվող կամուրջների և թունելների պահպանման մրցույթներին մասնակից կապալառու կազմակերպություններին ներկայացվող նվազագույն տեխնիկական պահանջների և պահպանման աշխատանքների ինքնարժեքի հաշվարկման մեթոդաբանության, կատարված աշխատանքների ընդունման կարգի, ինչպես նաև բնական աղետների կամ արտակարգ իրավիճակների դեպքում հրատապ աշխատանքների իրականացման, գնահատման և աշխատանքների ընդունման կարգի մշակում.

177) ընդհանուր օգտագործման պետական և ընդհանուր օգտագործման ոչ պետական ավտոմոբիլային ճանապարհներին գովազդի (գովազդային վահանակի) տեղադրման, ինչպես նաև ապօրինի տեղադրված գովազդային վահանակի ապամոնտաժման կարգի մշակում.

178) ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատման և ճանապարհային անվտանգության վարկանիշավորման, ճանապարհային ցանցի անվտանգության տվյալների կառավարման և ճանապարհային անվտանգության ազդեցության գնահատման չափանիշների սահմանման կարգի մշակում.

179) ճանապարհային անվտանգության տվյալների կառավարման համակարգի ձևավորման, վարման, տվյալների ինտեգրման կարգի մշակում.

180) թունելների անվտանգության գծով պատասխանատուի որակավորման, նշանակման և պետական ճանապարհային մարմնի հետ համաձայնեցման կարգի մշակում.

181) թունելների անվտանգության պարբերական փորձարկման և զննության իրականացում, ինչպես նաև թունելներում տեղի ունեցած վթարների վերաբերյալ հաշվետվության ձևի և ներկայացման կարգի մշակում:»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

07.03.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ